վերցնելու, վերոհիշյալ զիմմի որդին ևս մուսուլման դառնա և այդպիսով ինքը դառնա միակ ժառանգորդը, եղբայրներից ավագը լինելով հանդերձ, ավելի ուշ մուսուլման դարձածը կարող է ավելի վաղ մուսուլման դարձած եղբորից խլել ժառանգության իրավունքը, թե ոչ։ Պարզեցեք»[1]։

Շեյխ-ուլ-իսլամը այս հարցին ժխտական պատասխան է տալիս և ինքում

Այսպիսով ստացվում է հետևյալ պատկերը։ Վախճանվել է Բաբա անունով մի հայ։ Սերունդներ չունենալու պատճառով նրա ունեցվածքը ժառանգում են եղբայրները։ Բաբան ունեցել է երկու եղբայր, որոնցից մեկը մահմեդականություն էր ընդունել և վախճանվել էր թողնելով երկու որդիներ, իսկ մյուս եղբայրը, որը նույնպես երկու որդիներ ուներ, շարունակում էր մնալ քրիստոնյա։ Բայց որովհետև այս դեպքում, համաձայն Շարʼի ֆեթվայի ժառանգությունը հասնում էր մուսուլման եղբոր որդիներին և ոչ թե զիմմի եղբոր, ուստի վերջինս շտապում է մահմեդականություն ընդունել, որից հետո, որպես ավելի մերձավոր ժառանգորդ իրավունք է ստանում ժառանգելու եղբոր ունեցվածքը։

Պարզվում է ուրեմն, որ զիմմի ժառանգորդները, որքան էլ որ նրանք մերձավոր լինեին, զրկվում էին ժառանգությունից, եթե կային մուսուլման ժառանգորդներ։ Իսկ այս վերջիններս որքան էլ որ նրանք ազգակցությամբ ավելի հեռու լինեին, այնուհանդերձ ժառանգության իրավունքը նրանց էր վերապահվում։

Այնուհետև մենք տեսնում ենք, որ նոր մահմեդականություն ընդունած եղբայրը, որ սկսում է անվանվել Մեհդիկուլի, նախքան մահմեդականություն ընդունելը արդեն ուներ երկու որդի՝ Շահնազար և Զաքարիա անուններով, որոնցից Զաքարիան, որը եղբայրներից ավագն էր, զիմմի էր մնացել, իսկ Շահնազարը նույնպես մահմեդականություն էր ընդունել։ Դրա համար էլ համաձայն ֆեթվայի, իր հոր՝ Մեհդիկուլիի ունեցվածքը, որն իր հերթին ժառանգել էր իր եղբայր Բաբայից, նրա մահվանից հետո ամբողջությամբ անցնում է իր փոքր որդուն Շահնազարին, իսկ մեծ որդին զիմմի լինելու պատճառով զրկվում է ժառանգության իրավունքից և հետագայում մահմեդականություն ընդունելով էլ նույնիսկ չէր կարող վերականգնել իր ժառանգական իրավունքները։

Ինչպես տեսանք, հավատափոխությունը ավելի հեռավոր ժառանգորդներին հնարավորություն էր տալիս ավելի մերձավոր ժառանգների ձեռքից խլելու բոլոր իրավունքները և նրանց լիովին զրկելու ժառանգությունից։ Շարʼի ֆեթվաներում բավական պարզ ասված է, որ «եթե կա մուսուլման ժառանգ, անհավատները ժառանգությունից զրկվում են»։

Շարʼը միաժամանակ հնարավորություն էր տալիս զիմմի ժառանգներին անմիջապես մահմեդականություն ընդունելով վերականգնել իրենց իրավունքները։ Սակայն այդ պետք է կատարվեր նախքան ամբողջ ժառանգության մուսուլման ժառանգների միջև բաժանվելը։ Այլապես, ինչպես ասված է ֆեթվայում, ժառանգության իրավունքը պատկանում էր ավելի վաղ մահմեդականություն ընդունողին։

Միանգամայն հասկանալի է, որ ժառանգության պատճառով տեղի ունեցող հավատափոխության դեպքերը առանձնապես շատ էին քաղաքաբնակ

[1] ՄՊվ, թղթ. 1ա, վավ. № 44։